

ՀՀ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱ

ԱՐԵՒԵԼԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ձեռագրի իրաունքով

ՈՒԼՈՒՀՈԾԵԱՆ ԳԱՐԻԵԼԼԱ ԼԵՒՈՆԻ

ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑՈՒ «ԳԻՐՔ ՀԱՐՅՈՂԱՑ» ԵՐԿԻ
ՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ
(Բնագրագիտական քննություն)

Մասնագիտություն՝ 07. 00. 09.
Պատմագրություն եւ աղբիւրագիտություն

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Գիտական գեկուցման տեսքով՝
պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճան հայցելու համար

ԵՐԵՒԱՆ - 1994

Աշխատանքը կատարուած է Բոլոնհիայի պետական համալսարանի բանասիրութեան եւ փիլիսոփայութեան ֆակուլտետի միջնադարեան պատմութեան բաժնում

Պաշտօնական ընդդիմախօսներ՝

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Հ.Ա. ՍԻՄՈՆԵԱՆ

Պատմական գիտութիւնների դոկտոր

Կ. Ն. ՅՈՒԶԲԱՆՅԱՆ


Առաջատար կազմակերպութիւն՝ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտ:

Պաշտպանութիւնը տեղի կունենայ 1994թ. հոկտեմբերի 10-ին ժամը — ինչ ԸԸ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող Դ 005. 06. 01 մասնագիտական խորհրդի նիստում (հասցէ՝ Երեւան, Մարշալ Բաղրամեան պող. 24գ.):

Աշխատութեանը կարելի է ծանօթանալ ԸԸ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտի Ն. Մատի ան. Կովկասագիտութեան կաբինետում:

Ամփոփագիրը առաքուած է 1994թ. օգոստոսի 31 -ին:

Մասնագիտական խորհրդի գիտնական քարտուղար, պատմական գիտութիւնների թեկնածու


(Ա.Վ. ԽՈՍՏԵԱՆ)

Աշխատութեան ընդհանուր բնութագիրը. Չորրորդ դարի կէսերին Առաջատար քրիստոնէութիւնը կառուցուածքային ու գաղափարական, բարոյական ու սոցիալական կազմաւորման բարդ շրջան էր ապրում: Սուրբ Գրքի Արքայի ընթացմանն ու մեկնարկանութեանը զուգընթաց, եկեղեցու հայրերը այլեւս հոգալու էին պաշտօնէութեան աստիճանակարգերի, նրանց գործնական հարաբերակցութեան սահմանում խնդիրը՝ միաժամանակ կարգաւորելով եկեղեցու եւ քաղաքական իշխանութեան, եկեղեցու եւ հաւատացեալների համայնքի սոցիալակցութիւնները: Նկատի պէտք է առնել, որ եկեղեցին ներկայանում էր իբրեւ վերէթմիկական, վերվարչական կազմակերպութիւն՝ տիեզերական, սակայն ոչ ազատ տեղային բարոյութիւններից: Հարիրամեակների համայնքային հալածական կացութիւնը պարարտ հող էր ստեղծել հասարակութիւնից հեռանալու, ճգնակեցութեամբ պարապելու արմատաւորման համար, մինչդէռ պաշտօնական ճանաչում ստանալուց յետոյ եկեղեցին ու նրա սպասարները այլեւս չէին կարող գոհանալ երբեմն ծայրայեղութեան հասնող այդ դերով (բոսկիզմ): Անհրաժեշտ էին նորմեր, բարոյական-հոգեբանական ելակետեր, որոնք կսահմանէին համայնքն սպասարող քահանայութեան եւ վանական միութիւններ, միաբանութիւններ կազմող հոգեւորականութեան գործունէութեան շրջանակները, ստորեան, գործելակերպը, ենթակայութեան աստիճանը, նուիրապետութիւնը, կեցուածքն ու գաղափարական կանոնական սեւեռումը, անգամ նրա կենցաղը՝ ներառեալ տարազն ու ուտեստը: Լիովին կարելի է պատկերացնել այս ամենի հասարակական ճնշելութիւնը 4-5-րդ դարերի աստականացող հասարակարգերում՝ երբեմնի Հռոմէական կայսրութեան, նրա ազդեցութեան ոլորտ ընդգրկուած մեծ ու փոքր երկրների տարածքներում:

Հիմնական նպատակը եւ խնդիրները. Հայաստանը քրիստոնէութիւնը պաշտօնականացրած առաջնեկներից էր, ուստի կամ ինքնուրոյնաբար պիտի կարգաւորէր թուարկուած խնդիրները, կամ

հետեւէր քրիստոնէութեան Աշանաւոր կենտրոններէից մէկի որդե-
գրած գործելակերպին: Քանի որ մոր հաւատքի պաշտօնակա-
նացումը առաւելապէս Կապաղովկիական քարոզչութեամբ ու ձեռ-
նադրութեամբ կատարուած իրողութիւն էր, մանաւանդ որ դրան
մեծապէս Ապաստում էր Փոքր Հայքի հոգեւոր ենթակայութիւնը
Կեսարիայի եկեղեցուն: Հայոց եկեղեցին, բնականաբար, պիտի
հետեւէր կապաղովկիական դպրոցի թելադրանքներին՝ ամենից
առաջ կառուցուածքային-կազմակերպչական առումով:

Պատմաբանները վաղուց մկատել են, որ Կեսարիական եկե-
ղեցին գաղափարապէս եւ կազմակերպչօրէն հաստատուում էր
Սերաստիայի հայազգի եպիսկոպոս Եւստաթիոսի ու Արա կուսա-
կիցների դէմ պայքարելով (Ն. Աղոնց, Լ. Խաչիկեան, Ն. Գար-
սեկեան), ինչպէս նաեւ հանգամանօրէն քննութեան ենթարկել «երեք
մեծ կապաղովկացիների»՝ Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Աստուա-
ծաբանի եւ Գրիգոր Նիսիացու աննշութիւնները հայոց հետ, Արանց
առանձին երկերի գիտական հրատարակութեամբ (Կ. Մուրադեան),
սակայն առ այսօր ուսումնասիրուած, հրատարակուած ու քննար-
կուած չեն Բարսեղ Կեսարացու կարեւորագոյն մատենագրական
վաստակներից մէկի՝ «Գիրք հարցողաց»-ի հայերէն թարգմանու-
թեանն առնչուող խնդիրները, մինչդէռ հէնց այդ աշխատութիւնն է
սահմանք ծառայել հայոց վանականութեանը՝ կազմակերպչօրէն,
բարոյապէս, գաղափարական ու գործնական կտրուածքով: Ե՞րբ եւ
ի՞նչ ո՞ւ է այդ երկը թարգմանուել, ի՞նչ բնագրից, ի՞նչ այլայլում-
ներով, ի՞նչ դեր է կատարել, ի՞նչ հետքեր ու նաեւ մատենագրական
ազդեցութիւններ թողել, հայերէն խմբագրութիւնը յունարէն բնագրի
ի՞նչ վիճակ է ներկայացնում եւ որքանո՞վ է կարելորդ Արա
նախնական բնագրային տեսքի նախնական համար: Այս եւ աղբի-
րագիտական նման այլ հարցերի քննութեանն է նուիրուած ներկա-
յացուող առեմնախօսութիւնը:

Գիտական նորոյթը. Վերոշարադրեալ հարցերը ցայսօր չէին
կարող աւարտուն ու հիմնաւոր լուծում ստանալ, քանի դէռ ուսում-

նասիրուած եւ հրատարակուած չէին սուրբ Բարսեղի լիջեալ երկը
բովանդակող հայկական միջնադարեան գրչագրերը: Ուրեմն
կարելորդ նորոյթներից մէկը հայագիտութեան մէջ առաջին անգամ
շուրջ երեք տասնեակի հասնող եւ աշխարհի տարբեր հաւաքածու-
ներում պահպանող ձեռագրերի ու ձեռագրական պատասիկների
քննական ու համակարգուած ուսումնասիրութիւնն է՝ Արանց ժամա-
նակագրական, կառուցուածքային ու գրչական աղբիւրների քննա-
յայտմամբ: «Գիրք հարցողաց»-ի հին հայերէն թարգմանութեան
գիտական բնագրի մեր հրատարակութիւնը նախորդում է Արա
յունարէն բնագրի եւ արեւելեան այլալեզու միջնադարեան թարգ-
մանութիւնների մասնատիպ հրատարակութիւններին եւ Աշանակալի
չափով խթանում ու պայմանաւորում դրանք: Գրաբար բնագրի
իտալերէն մեր թարգմանութիւնը ընդլայնում է Արա գիտական
գործածականութեան շրջանակը, դիրքացնում այլալեզու խմբա-
գրութիւնները համադրելու եւ այդ հիմամբ յունական նախօրինակը
վերականգնելու գործը:

Հայերէն թարգմանութիւնը շատակօրէն ուրուագծում է «Յաճա-
խապատում» ճառերի աղբիւրագիտական աղբիւրը (հետեւեալս եւ
վերջինիս հեղինակի ու ստեղծման ժամանակի հարցը), «Կանոն-
գրքի» ու «Գիրք թղթոց»-ի առանձին դրուագների համադրութեամբ
պարզում է «Գիրք հարցողաց»-ի գործածութեան ոլորտն ու շրջա-
նակը: Ի վերջոյ՝ Արաական է դառնում Աստղիկի վկայութիւնը հայ-
կական վանական կազմակերպութիւնների կանոնական հիմունք-
ների մասին:

Բազում են աղբիւրագիտութեան, հայ բանասիրութեանը եւ
հայ-բիւզանդական պատմական-մշակութային, լեզուական խնդիր-
ների առնչուող այն նորոյթները, որ առաջադրում կամ լուծում են
Բարսեղ Կեսարացու «Գիրք հարցողաց»-ի հայերէն թարգմա-
նութեան գիտական հրատարակութեամբ:

Մեթոդական հիմքը. Հայագիտութեանը վաղուց արդէն ծանօթ է
եւ հաջողութեամբ կիրառում է հայրախօսական գրականութեան

ուսումնասիրման ու հրատարակման քննական մեթոդին: Հետեւելով պատմա-բանասիրական աշխատանքի աւանդական այդ եղանակին, մենք զանց չենք առել հայրաբանութեան մարզում նորօրեայ նուաճումները մասնաւոր թնագրագիտական-ձեռագրագիտական առումով, մասնաւորապէս երոպական որեւէ նոր լեզուի թարգմանելու պահանջը: Մեր իտալերէն թարգմանութիւնը զայիս է լրացնելու Մխիթարեան հայրերի անցեալ ու նոր փորձերը, որպիսիք տակաւին շատ չեն:

Գիտական նշանակութիւնը. «Գիրք հարցողաց»-ի հրատարակութեամբ աւարտում է Բարսեղ Կեսարացու մատենագրական ժառանգութեան հին հայերէն թարգմանութիւնների գիտա-քննական թնագրերի կազմումը, որ սկսուել էր հանգուցեալ հայագետ Կիմ Մուրադեանի պարտաւորեցնող նախաձեռնութեամբ: Այլեւ յուսալի կոուսաներ են ստեղծուած սուրբ Բարսեղի երկերին առնչուող աղբիւրագիտական-մշակութաբանական բազում քննութիւնների համար, պարզուած հայ մատենագրութեան պատմութեանը վերաբերող շատ խնդիրներ:

Սուրբ Բարսեղի ժառանգութեան հին հայերէն թարգմանութիւնների հրատարակութիւնը ընդհանրական կարեւորութիւն ունեցող փաստ է, հայագիտութեան կշռաւոր նպաստը բիզանդագիտութեանը, մասնաւորապէս հայրաբանութեանը: Այժմ մեծապէս դիտացուած է միւս երկու կապադովկացիների՝ Աստուածաբանի ու Նիսացու երկերը հրատարակութեան պատրաստելու խնդիրը. այլեւ մշակուած է մեթոդը, պարզուած աղբիւրագիտական շրջանակը: Գործնական առումով այս նուաճումը նորից է հաւաստում հայկական խմբագրութիւնների ու տարբերակների անզանցաւելի կարեւորութիւնը եկեղեցու սուրբ հայրերի թողած ժառանգութեան գիտական հետազօտութեան գործում եւ միաժամանակ վկայում է, թէ հայոց միջնադարը որքան ընկալունակ է եղել քրիստոնէական քաղաքակրթութեան նուաճումները սեփականելիս:

Աշխատութեան պաշտօնական արժեւորումը. Այն բազմիցս, իբրեւ զեկուցման կամ յօդուածի միջ, ներկայացուել է միջազգային գիտաժողովներում, քննարկուել է ու հարց առ հարց ըստ պարագաների թելադրանքի հրատարակուել: Երկհատոր մեր հրատարակութիւնը բնականաբար, պիտի քննարկուէր նաեւ «Դիւան քրիստոնէական արեւելեան մատենագրութեան» մատենաշարի խմբագրութիւնում: Ի վերջոյ՝ երկհատորը, իբրեւ զեկուցի տեքստով ներկայացուող ասեմախօսութիւն, մասնաշատուկ քննութեան է առնուել Հայաստանի ԳԱԱ արեւելագիտութեան ինստիտուտի «Քրիստոնէայ Արեւելքի բաժնում եւ գիտական խորհրդում: Քննարկումների ու հրապարակումների ժամանակագրութիւնն ու աշխարհագրութիւնը բացորոշ կերեւան ամփոփման վերջում ներկայացուող հրապարակումների ցանկում:

Աշխատանքի հիմնական բովանդակութիւնը. Երեք կապադովկացիներից հայերին քաջածանօթ էր յատկապէս Բարսեղ Կեսարացու գործունէութիւնը եւ քարոզչութիւնը: Պատահական չէ, որ նրա աճանորութեան շուրջ ստեղծուած վաղեմի աւանդութիւնը ընդհանուր շատ գծեր ունի հայոց մէջ սրբացուած Ներսէս Մեծի կերպարի հետ¹: Ուստի եւ միանգամայն բնական պէտք է համարել 5-րդ դարում՝ քրիստոնէական մշակույթի եւ գրականութեան իրացման բուն շրջանում, Բարսեղ Կեսարացու երկերի հայերէն թարգմանութեան եւ լայնօրէն տարածման իրողութիւնը: Նրա ժառանգութիւնից յատկապէս նշելի են «Վեցօրեան», «Գիրք պահոց» ճառերի ժողովածուն եւ «Գիրք հարցողաց» երկը, որի յունարէն բնագիրը յայտնի է Ἀσκητικόν ընդհանուր անունով:

¹ Այս մասին տե՛ս Կիմ Մուրադեան «Բարսեղ Կեսարացի եւ նրա «Վեցօրեան» հայ մատենագրութեան մէջ» Երեւան 1976, Ն. Գարսեղեան, Nerses le Grand, Basile de Cesaree et Eusthate de Sebaste. REArm., n.s. XVII, Paris 1983; The Epic Histories Attributed to P'awstos Buzand (Translation and Commentary by Nina G. Garsoian), Cambridge (MA), 1989:

Վերջինս ողջ Բրիստոնեայ Արեւելքում յայտնի է եղել իբրև Բարսեղի իրատեսակ կանոնադրութիւն՝ ուղղուած բոլոր այն քրիստոնեայ հաւատացեալներին, որ կամենում էին առաւել խորութեամբ եւ ի մօտոյ հետեւել նոր ուսմունքին: Երկի հիմնական խնդիրն է կանոնակարգել մասնատրապէս Փոքր Ասիայում եւ հարակից երկրներում մեծ տարածում գտած ճգնատրական կեանքը, որ այդ ժամանակ բնութագրում էր Աերդաշնակ հասարակական կեանքի համար սպառնալիք դարձող ծայրայեղութիւններով, մեծակեացների անկառավարելի հոսքով դէպի անմատչելի քարայրները, լեռնային ծերպերը եւ առհասարակ ճգնատրական վարքութարքում միասնական կարգուկանոնի բացակայութեամբ:

Իբրև ժամանակի հոգեւոր եւ հասարակական կեանքի խոշորագոյն կազմակերպիչ-վերանորոգողներից մէկը, Բարսեղ Կեսարացին քարոզում է նախ եւ սուսջ Աստուծոյ սէրը, որ միակ հաստատուն կապը կլինէր վանականների միաբան կեանքի, որի հիմքի վրայ էլ հնարատր էր կառուցել ճգնատրական մի նորատիպ հաստատութիւն՝ փոքր խմբերով, այսպէս կոչուած «եղբայրութիւններով» կազմակերպուած: Սրանց կեանքը, ըստ Կեսարացու, պէտք է ընթանայ հոգեւոր ամուլջնորդի ղեկավարութեան ներքոյ, նրա որոշումների ու հրահանգների լիակատար հնազանդութեան պայմաններում, ներառած աղօթքն ու գործունէութիւնը, կարօտեալների, հիւանդների ու ճամփորդների սպասարկութիւնը: Ըստ այդմ՝ Կեսարացին անդրադառնում է նաեւ եղբայրութեան ներքին՝ յստակ լուծում պահանջող տնտեսական ու գործնական խնդիրների: Հրահանգ-կանոնների այդ ամբողջութիւնը «Գիրք հարցողաց»-ում տրուում է հարց ու պատասխանների շարքով՝ ներկայացնելով ամենաբազմազան՝ աստուածաբանական, բարոյագիտական, կենցաղային, իմաստասիրական, պաշտամունքային եւ այլ խնդիրների մի որոշակի շրջանակ եւ ուրոյն սահմանումներ: Միաբանների առաջադրած հարցերին Կեսարացու տուած պատասխանները հիմնականում ներշնչուած են Աստուածաշնչից, որից կատարուած հարիւրատր

մէջբերումները «Գիրք հարցողաց»-ում պահանջում են մասնագիտական յստուկ ուսումնասիրութիւն²:

Իբրև նոր քարոզչութիւն, սոյն կանոնադրութիւնը բարկշրջեց եւ միանգամայն նորովի հիմքերի վրայ դրեց ողջ Արեւելքի ճգնատրական կեանքը եւ գաղափարաբանութիւնը, գտաւ ընդհանրական ընդունելութիւն:

Ἀσκητικόν-ի հայերէն բնագիրը կազմուած է հարցերի ցանկից, 361-362 հարց ու պատասխան (հարցմունքներ) ներկայացնող քննարկումից, երկու առաջաբանից եւ մի շարք կանոններից՝ այսպէս կոչուած «պատուհասներից»: Ինչ վերաբերում է երկի յունարէն բնագրին, միջնադարում այն կրել է մի շարք փոփոխութիւններ, որոնց հետ կապուող բանասիրական-աղբիւրագիտական շատ խնդիրներ տակաին յստակուած չեն, քանի որ նրա զիտաքննական բնագիրը դեռեւս չի կազմուած: Ἀσκητικόν-ի այսօր հրատարակի վրայ եղած յաւագոյն ամբողջական տեքստը պատրաստուած է Ժ. Գառնիեի (J. Garnier) կողմից, 1722թ. եւ ամփոփուած Patrologia Graeca մատենաշարում (հատ. 31, սիւն. 832-1308): Այն թէեւ քննական չէ, սակայն տեղ-տեղ ունի ընդհանուր բնոյթի ծանօթագրութիւններ՝ ձեռագրական տարբերակների նշումով: Դրանք, անշուշտ, բաւական չեն այսօրուայ բնագրագիտութեան պահանջները բաւարարելու համար եւ, բնականաբար, լրացուցիչ դժուարութիւններ կան համեմատութիւններ կատարելիս: Բարեյ-սխտաբար, հրատարակի վրայ է ֆրանսիացի գիտնական Ժան Գրիբոմոնի Histoire du texte des Ascétiques de S. Basile (Louvain, 1953) արժէքատր պատմաբանասիրական-ձեռագրագիտական հետազօտութիւնը,

² Մասնատր այդ քննուիւնը պէտք է պարզի, թէ Աստուածաշնչի մէջբերումները թարգմանազիս ո՞րն էր հայրաբանական երկերի թարգմանիչների մօտեցումը: Մեր դէպքում յունարէն բնագիրը համընթաց է Աստուածաշնչի ընդունուած տեքստին, մինչդէռ հայերէնը շատ անգամ շեղում է Ջոհրապեան տեքստից, հարց հարցուելով՝ արդե՞օք սոյն տարբերակները գալիս են թարգմանչի ազատ յօրինուածքից թէ՞ արձագանքն են մի ուրիշ հին թարգմանութեան:

որից անհրաժեշտութեան դէպքում օգտուով ենք մեր ուսումնասիրութեան մէջ:

Ἀσκητικόν - ի այլալեզու տարբերակները շատ են. ժամանակին այն թարգմանուեց Քրիստոսեայ Արեւելքի գրեթէ բոլոր լեզուներով. առաւել արժէքատուր է նոյն 4-րդ դարում Ռուփիմոսի կատարած լատինական համառօտ «Փոքր Ասկետիկոն» անունով յայտնի խմբագրութիւնը: Այնուհետեւ հնագոյններից է յուշարձանի հայերէն թարգմանութիւնը, որը յայտնի է «Գիրք հարցողաց» անունով (ի դէպ, այս խորագիրը առաջին անգամ հանդիպում է 12-րդ դարում, «Գիրք պատճառաց»-ի ցանկերում, մինչդէռ բուն երկը մինչեւ 17-րդ դարի սկիզբը մեզ անուր շարունակուր մ էր ընդօրինակուել անխորագիր):

Հայերէն թարգմանութեան կարեւորութիւնը յունարէն նախաբնագիրը վերականգնելու համար անվիճելի է: Ըստ Ժ. Գրիքոսովի, հիմքեր կան ենթադրելու, որ հայերէն հին թարգմանութիւնը ներկայացնում է յունարէն նախօրինակի մի հնագոյն խմբագրութիւն, որից 9-րդ դարում օգտուել են Կոստանդնուպոլսի հուշակատր Ստուդիոն վանքում: Նրա կարեւորութիւնն անելի է շեշտուում, եթէ նկատի առնենք, որ թարգմանութիւնը յունարէնի բնագրի անելի հին վիճակ է ներկայացնում, քան այսօր մեզ յայտնի ամենահին յունարէն ձեռագիրը:

Ինչպէս ցոյց է տալիս հայերէն թարգմանութեան մեր կատարած բառացի լիակատար համեմատութիւնը, այն հիմնականում նոյնանում է յունարէնին՝ ընդգրկելով նրա բնագիրն ամբողջութեամբ: Թարգմանութիւնը բառացի, սակայն ոչ կոչր ընդօրինակութեամբ հետեւում է նախաբնագրին, իսկ շեղումները, պարզում է. գրեթէ միշտ համընկնում են Ժ. Գառնիեի հրատարակութեան մէջ օգտագործուած ձեռագրական այլընթերցումներին, մասնաւորապէս՝ Reg. I (այժմ՝ Paris. gr. 505), Voss. (այժմ՝ Leiden gr. 1) եւ հազուադէպ Colb. (այժմ՝ Paris. gr. 502) երեք ձեռագրերին: Հայերէն թարգմանութիւնը յետաքրքիր է նաեւ նախաբնագրի հետ իր դրսեւորուած մի քանի

կառուցուածքային կարեւոր տարբերութիւններով, որոնք թերեւս, կարող են դիտուել իրրեւ թարգմանութեան նախագաղափար օրինակի առաւել հնութիւնը վկայող լատինահիշմեր: Դրանցից ակնառուն յունարէնում առկայ հարցուպատասխանների՝ «ընդարձակ» եւ «համառօտ» դասակարգման քայքայութիւնն է հայերէնում եւ ապա՝ յունարէնի նկատմամբ հայերէնում հարցմունքների հերթակայութեան խիստ անհամապատասխանութիւնը: Եւ, վերջապէս, բնագիրը եզրափակող «պատուհաս» կոչուող կանոնները հայերէնում քիչ են, թուով 11՝ յունարէնի 60-ի դիմաց:

Նշուած սոնցութիւնները, որոնց մենք անդրադառնում ենք մեր հրատարակութեան մէջ, կարիք ունեն հայագէտ եւ յունագէտ աղբիւրագէտների համակողմանի համալիր վերլուծութեան եւ վերջնական արժէքաւորման, սակայն իրերի ներկայ վիճակով անգամ պարզ է, թէ որքան մեծ է այն նպաստը, որ կարող է բերլ հայերէն թարգմանութիւնը միջազգային բարսեղագիտութեանը:

* * *

«Գիրք հարցողաց»-ի հայերէն թարգմանութեան հեղինակին եւ ժամանակին վերաբերող որեւէ մատենագրական տեղեկութիւն չունենք: Վստահ կարելի է ասել սակայն, որ Բարսեղ Կեսարացու կեանքն ու գործունէութիւնը արդէն 5-րդ դարում քաջ յայտնի են եղել Հայաստանի մտաւորական լայն խաւերին: Նրա գործուն մասնակցութիւնը Փոքր Հայքի եկեղեցիների մի շարք խնդիրներ լուծելիս, հայ եւ յոյն քրիստոսեայ բնակչութեանը ուղղուած քարոզչութիւնը բաւարար հիմքեր էին, որ անունը արծարծուէր եւ մեր պատմիչների երկերում: Պատահական չէ, որ Փաւստոսի Պատմութեան 4-րդ գրքում, անդրադառնալով Ներսէս Մեծի կերպարին, ինչպէս վերը նշեցինք, զուգահեռներ է նշում (որոշ շփոթութեամբ եւ անաքրոնիզմով) Բարսեղ Կեսարացու կեանքի հետ, իսկ Ղազար Փարպեցին «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» երկում, մերժելով ամբաստանողների մեղադրանքները, իր կարդացած հեղինակների

շարքում, ի թիւս եկեղեցու նշանաւոր հայերի, յիշում է եւ Բարսեղի անունը:

Թարգմանութեան ժամանակի հարցը սակայն, անլի յետակ պատասխան է պահանջում: Նկատենք, որ ստուգելի են Կեսարացու հայերէն թարգմանութեան բոլոր երեք գործերի՝ «Վեցօրեայ»-ի, «Գիրք պահոց»-ի եւ «Գիրք հարցողաց»-ի թարգմանութեան համ-գամանքները: Հիմնականում լեզուական, ոճական ու բառագան-ձային իրայատկութիւններից էլնելով, հետազոտողները համերաշխ են, որ «Վեցօրեայ»-ի թարգմանութիւնը կատարուած է 5-րդ դարի առաջին կէսին: Այս կարծիքին է մասնատրապէս Կ. Մուրադեանը. նա «Վեցօրեայ»-ի ազդեցութեան հետքեր է գտնում նոյնիսկ Կորինթի երկում, իսկ Հայկազեան բառարանի հեղինակների համոզ-մամբ «Վեցօրեայ»-ն է «հին թարգմանութիւն քաջ հայկաբանու-թեամբ»: Ինչ վերաբերում է «Գիրք պահոց»-ին, բաղադրուած լինելով մի քանի տասնեակ ճառերից, կարելի է կարծել, թէ բոլոր ճառերը չէ, որ թարգմանուած են նոյն ժամանակ, նոյն թարգմանչի ձեռքով: Մաշտոցի անուան Մատեմադարանի No. 5595 ձեռագրի 327ա էջի յիշատակարանը վկայում է, որ գոնէ «Ի ծնունդ Փրկչին» ճառը թարգմանուել է 7-րդ դարում, Համագաստ Մամիկոնեանի խնդրանքով, Դաւիթ Տարօնացու ձեռքով: Սոյն փաստը իր հերթին արդարացնում է ՆՀԲ-ի հեղինակների կարծիքը, թէ՛ «Այս ամենայն (Բարսեղի գործերը-Գ. Ռ.) ընդհանրապէս են թարգմանութիւնք նախնեաց ի Ե դարու, բայց կան եւ ի նոսա ինչ-ինչ թարգմանեալ ի Ջ եւ ի Է դարս տարապայման հելլենաբանութեամբ»³:

Բարսեղ Կեսարացու հայերէն թարգմանութիւններում ոսկե-դարեան նորմերի և 7-րդ դարի լեզուական իրողութիւնների առկա-յութիւնը հնարատր⁵ դարձնում ենթադրել, որ «Գիրք հարցողաց»-ի թարգմանութիւնը կատարուած լինի վերոնշեալ երկր⁶ ժամանակա-

³ Կ. Մուրադեանի հետազոտութիւնն ու պատրաստած գիտական բնագիրը այժմ հրատարակութեան ընթացքի մէջ է

հատուածների արանքում, ետմաշտոցեան, բայց նախաշոնարան շրջանում: Այս կարծիքը մենք կփորձենք հաստատել բնագրային մի քանի «ներքին» և «արտաքին» փաստերով:

«Ներքին» փաստերի, այլ խօսքով «Գիրք հարցողաց»-ի թարգմանութեան լեզուական իրայատկութիւնների և մասնատ-րապէս լուծական բնագրի հետ ունեցած մերձատրութեան առնչու-թեամբ պէտք է նշենք, որ բառ առ բառ համեմատելով հայերէն թարգմանութիւնը լուծարէն հրատարակուած բնագրի հետ, մենք յանգել ենք հետևեալ եզրակացութեան.

ա) Հայ թարգմանիչը բառացի թարգմանել է իր ձեռքի տակ եղած լուծարէն բնագիրը,

բ) Թարգմանութեան լեզուն ներկայացնում է մի միջակայ փուլ դասական և լուծարան թարգմանութիւնների լեզուների միջև:

Այս եզրակացութիւնները հիմնատրող փաստերը կվերլուծուեն մեր հետագայ շարադրանքում՝ լուծարէնի հետ թարգմանութեան առնչակցութեան և բուն թարգմանութեան բառապաշարի, ձեւա-բանութեան և շարահիստութեան հարցերը քննելիս, իսկ այժմ նկա-տենք, որ լեզուական տուեալները թոյլ են տալիս սոյն թարգմա-նութիւնը համարել թարգմանական լեզուի մի հետաքրքիր նմուշ, ուր ուշագրաւ զուգակցութեամբ երեւում են դասական ոճի գեղեց-կութիւնն ու փայլը և լուծարէնի ազդեցութեան որոշակի հետքեր: Գոյութիւն ունեն նաեւ «Գիրք հարցողաց»-ի թարգմանութեան վաղեմիութիւնը հաստատող կողմնակի լրացուցիչ «արտաքին» վկայութիւններ, որոնք ուղղակի կոուանների բացակայութեան պայ-մաններում հարցի լուծման համար ոչ երկրորդական նշանակութիւն են ստանում: Փաստերի առաջին խումբը կապում է «Յաճա-խապատում ճառեր»-ի, երկրորդը՝ «Հայոց կանոնագիրք»-ի հետ:

Անդրադառնանք դրանց առանձին-առանձին:

1. Յաճախապատումի 23-րդ ճառը գրեթէ ամբողջութեամբ արձագանքում է Բարսեղ Կեսարացու մի քանի գլխատր դրոյթների:

Այն եւս քարոզում է Աստուծոյ սէրը, որ «եղբայրութեան» կապող գաղափարն է, «առաջնորդին» կամ «վերակացուն» հնազանդելու անհրաժեշտութիւնը, աղօթքի, աշխատանքի հարկաւորութիւնը եւ այլն: Ընդ որում, երկու յուշարձաններում էլ «եղբայրութիւն», «եղբայր», «առաջնորդ» եւ «վերակացու» բառերը վկայուած են նոյն նրբիմաստներով: Առաւել խօսուին, սակայն քաղումներ վկայող բառական, ոճական ու դարձուածքային նոյնութիւններն են: Ստորեւ ներկայացուող զուգադիր մէջբերումները, *Պրոնցիոնի* քանիսը բերում է «Պ. Ս.» ստորագրութեամբ հեղինակը «Արարատ» ամսագրում, (1898թ., No.1-12, էջ 244-249) ցոյց են տալիս այդ ուշագրաւ իրողութիւնը.

Յաճախապատում 23-րդ ճառ Գիրք հարցողաց (Basilio di
(Սրբոյ Հօրն մերոյ Գրիգոր Լու- Cesarea II Libro delle Domande
սաւորչի Յաճախապատում (Le Regole) edito da Gabriella Ulu-
ճանք վեներեթիկ 1838) hogian Lovanii 1993)

Ունկնդիր լինել առաջնորդաց ... պարտական է (առաջնորդին
խրատուց եւ հպատակ կալ - Գ. Ու.) վասն եղբայրութեան
նոցա հրամանացն եւ նոքա մի տքնել վասն ոգւոց նոցա, եւ
անհոգ լիցին ժողովրդեան ուխ- հոգալ վասն փրկութեան իրա-
տին, զի համառ տալոց են քանչիւր, որպէսզի համառ տա-
վասն նոցա յաւուրն այցելու- լոց են հոգալ այսչափ... Հարց.
թեան էջ 209 21, § 274

Եւ որ վերակացուն է, զգաստ ... ոչ խստութեամբ պատու-
լիցի առ մերձաւորս եւ նախա- հասել, այլ հեզութեամբ արի-
տես առ հեռաւորսն էջ 209-210 նադրել եւ խրատել, որպէս
գրեալ է (2 Տիմ. Բ. 2, 25),
զգաստ առ մերձաւորս,
նախատես առ հանդերձեալսն
Հարց 35, § 368

... զիրաքանչիւր գործն յառա- Իրաքանչիւր ումք պարտ է իր
ջացուցանել փութացել եւ ան- գործոյն ուշ դնել եւ զայն ցան-
դանդաղ զփառաբանութիւնն ա- կալով հոգալ, որպէս Աստուծոյ
ւարտեսցին հաճոյ Աստուծոյ եւ նուիրեալ, անդադաղ փութով եւ
առաջնորդին եւ եղբայրութեան, հոգալով մտաւորութեամբ, ան-
զի կարացեն ասել ամենեքեան... բծութեամբ լնուլ, զի ունիցի հոյ-
էջ 211 մարձակութիւն ասել յամենայն
ժամ... Հարց 34, § 355

Եւ հասարակաց պաշտօնն մի՛ պատճառաւոր ինչ խափանեցի, բայց եթէ ի պէտս ինչ եկեղեցուն ըզբաղեալ հրամանա վերակացոյն. սակայն եւ անդ կատարեցի աղօթքն: Եւ ամենայն ուրեք պաշտօն աղօթիցն հոգեւորապէս կատարեցի անխափան. ի նստել ի տան, ի գնալ ի ճանապարհի, ի գործել եւ ի անջել եւ ի լառնել: Եւ չթողուլ ի մտաց զյիշատակսն Աստուծոյ էջ 211

Եւ դիրսու հաւանութիւն ճշմարիտ սիրով առ վերակացուն եղիցի ամենեցուն, եւ մի ըստ իր կամացն խնդրեցէ զգործն ի նմանէ... էջ 211

Ապա եթէ ունի ինչ պատճառս մեկուսանալոյ, մի ծածկեցէ յառաջնորդէն եւ յեղբայրութեանն էջ 212-213

Հարց. Եթէ պարտ է ի պատճառս աղաթից եւ սաղմոսաց զգործոյն անփոյթ առնել, եւ որ ժամանակք են աղաթից պատշաճ եւ առաջին՝ եթէ պարտ է գործել: Հարց 33, § 326

Թեպէտ եւ հետաւորագոյն ուրեք վասն գործոյն եւ տեղեացն բնութեան հասանիցեն, լնու պարտիւն անդ իրաքանչիւր աղաթսն... Հարց 33, § 337

... եւ կախել զյիշմանց նորա (Աստուծոյ - Գ. Ու.), որպէս զմարցն տղայքն... Հարց. 2, § 113

... զի որ ըստ իր ցանկութեանն ընտրեցէ զգործն, ամբաստանութիւն զինքենէ բերէ... Հարց 34, § 352

Հարց. Եթէ արժան է մեկուսանալ ուրեք առանց յիշեցուցանելոյ վերակացոյն: Աս. Տեսոն ասելով..., որչափ եւս առաւել իրաքանչիւր ոք ի մէնջ ինքնակամ լինել ոչ պարտի Հարց 104, § 486

Այլ որ տնտեսն է՝ համարեցի զինքն Աստուծոյ մատակարար, ահի եւ երկիրի տնտեսեցէ զհաստացեալսն յԱստուծոյ անդն, եւ զգուշացի անօթոցն մի ի ծուլութենէ կորուցէ, եւ կամ յարհամարհանաց արտաքս ընկեցէ. եւ անփոյթ արարեալ աւանդիցն յաճախ ի ծախս առից ոչ ի հաճոյս Աստուծոյ, եւ կրեցէ դատաստան ի Տեսոնէ որ ի միտ առնու զամենայն զխորհորդս եւ զգործս. զի ամենայն ինչ յԱստուծոյ է նուիրեալ յաղագս պիտոյից եղբայրութեան: էջ 213

զի մի ի հեղափոխոցն ի դատաստանս անկանիցին էջ 214

Երկու բնագրերի հարազատութիւնը անտարակուսելի է: Բարսեղ Կեսարացու ինքնուրոյն մտքերի՝ լեզուական նոյն աստղածով առկայութիւնը Յաճախապատում ճաներում թելադրում է ենթադրել, որ «Գիրք հարցողաց»-ը ծանօթ էր վերջիններիս հեղինակին իր հայերէն խմբագրութեամբ: Այս փաստը հարկադրում է կամ զգալիօրէն ետ բերել «Յաճախապատում»-ի ստեղծման ժամանակը, կամ եզրակացնել, որ «Գիրք հարցողաց»-ի թարգմանութիւնը շատ վաղ է կատարուել:

2. «Գիրք հարցողաց»-ի հայերէն բնագիրը եզրափակուող թոով տասնմեկ կանոններ՝ «պատուհասներ», որ սահմանում են մեղանշած միաբանների պատիժները, բոլորն էլ նոյն խմբա-

Հարց. Որպէս խնամ անել պարտին գործաւնեայքն հաւատացեալ նոցա անաթոցն: Աս. Առաջին՝ որպէս Աստուծոյ անուանեալք եւ նուիրեալք, սպա... Հարց 124, § 508

Հարց. Եթէ ի ծուլութենէ կորուցէ եւ կամ յարհամարհանաց արտաքս վարեցէ. Աս. Որ արտաքս վարեաց, որպէս սեղանակապուտ, իսկ որ կորոյսն, որպէս պատճառք կողոպտողի դատեսցի. զի ամենայն որ Տեսոն անուանեալ է. Աստուծոյ նուիրեալ է: Հարց 125, § 509

անկցի ի հեղափոխոցն դատաստան Հարց 128, § 512

գրութեամբ տեղ եւ գտել «Հայոց կանոնագիրք»-ի ճիշտ այն բաժնում (առաջին երեք տիեզերական ժողովների կանոններից ամփոփապէս լետոյ եւ Օսմանականի ժողովի կանոններից առաջ), որ ներկայացնում են եկեղեցական օրէնդրութեան ժամանակագրական առումով ամենահին նիւթերը՝ ի մի բերումս հաւանաբար արդէն 5-րդ- 6-րդ դարերում եւ խմբագրումս յետագայում 8-րդ դարում Յովհաննէս Օճնեցու ձեռքով:

Անտարակոյս է, որ Բարսեղ Կեսարացու սահմանադրութիւնը (ի միջի այլոց երկրորդ առաջաբանի ենթավերնագիրն է «Սահմանք կրօնատարականք») գործածական է եղել միջնադարեան հայկական վանքերի լայն շրջանակում (Սեւանի Առաքելոց վանք, Կամրջաձոր, Սանահին եւ Հաղբատ), ինչպէս վկայում է Ստեփանոս Տարօնեցին (Ասողիկ)⁴:

«Յաւորս Սմբատայ յՅԽԶ թուականին... փոխանորդէ զարօռ հայրապետութեանն այրն Աստուծոյ Մաշտոց:... Ի մանկութենէ խոտարուս կենօք կեցեալ անապատաւոր ճգնութեամբ, որ եւ ի ծովուն Գեղամայ զկղզին Սեւանայ բնակութիւն իւր արարեալ՝ շինէ զեկեղեցին ի նմա, որ Առաքեալս անուանի: Յոր միացեալ ժողովեցան եղբարց բազմութիւն, կանոնադրութեան սահմանաւ սրբոյն Բարսեղի, միակրօնք ի տան Աստուծոյ եղեալ, ստանալով զբազմութիւն գրոց սրբոց՝ զի լուսաւոր եղիցին աչք ոգոց ի տեսութիւն ճանապարհին Տեառն ըստ անստերիւր ուղեորութեանց»: էջ 159-160

«Յայսմ ժամանակի (929-ից լետոյ- Գ. Ու.) ծաղկեալ պայծառանայր կարգ կրօնատրական հանդիսից ի աշխարհից Հայոց: Եւ ի յով տեղիս շինեցան եղբայրանոցք, եւ ժողովեցան միաբանակեացք սիրովն Քրիստոսի: Նախ առաջին՝ մեծահոգակ ուխտն Կամրջաձորոյ ի գաւառին Արշարունեաց, որոյ առաջնորդ հայր

⁴ Ստեփանոս Տարօնեցոյ Ասողիկան, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 159-160, 173-174, 181:

Յովհաննէս... եկեալ բնակեցաւ յառաջասացեալ տեղին Կամրջաձոր, կանոն կարգի ունելով զսահմանադրութիւն սրբոյն Բարսղի հայրապետին մեծի ի վերայ առաքելական հիմանն՝ թէ «Էր անցա ամենայն ինչ հասարակուց (Գործք Առ. Բ, 44)». յոր ժողովեալ արք ճգնադրեացք թոով Յ»: էջ 173-174

«Յաւորս սորա (953-ից լետոյ- Գ. Ու.) շինեցան կրօնատրանոցք, ճգնատրականաց տեղիք Սեւաորդեաց աշխարհին, հաւասարակեացք, միաբանականք, ըստ յառաջասացեալ կանոնին սահմանադրութեան սրբոյն Բարսղի, որոց երկոցունց տեղեացն անուանք Հաղբատ եւ Սանահին հանդէպ միմեանց, միակրօնք ի տան Աստուծոյ արանց Օ-ոց»: էջ 181

* * *

«Գիրք հարցողաց»-ի լեզուական համակողմանի քննութիւնը (բառապաշար, ձեւաբանութիւն, շարահիւսութիւն) փաստացի հիմք է տալիս ասելու, որ թարգմանիչը հանդէս է բերել բնագրի նորը ըմբռնողութիւն, լեզուական ճկունութիւն, դասական հայերէնի բառապաշարի հմուտ օգտագործում: Բառերին տալով նորովի հնչողութիւն, նա անհրաժեշտութեան դէպքում՝ բնագրի թելադրանքով չ՝ խուսափում նաեւ բառիմաստների նրբերանգային արուեստաւոր եւ բնագրային համարժէք նորամտութիւններից եւ իմաստային ուրոյն շեշտադրումներից: Օրինակ, ἀδελφός (եղբայր) բառն օգտագործում իր մասնակի՝ «հաւատքի եղբայր, կրօնակից», ἀσκησις (վարք)-ը՝ «ճգնատրութիւն», κατορθόω (ուղղել)-ը՝ «իրականացնել, հասնել մի բանի», ἐξετάζομαι (խուզիմ)-ը՝ «հարմարուել», σκοπός (հանդէս)-ը՝ «նպատակ» իմաստով:

Ինչ վերաբերում է յունարէնի բարդ բառերի թարգմանութեանը, ուշագրաւ է նշել, որ «Գիրք հարցողաց»-ի հայերէն բնագիրը գրեթէ բոլորովին զերծ է նախդիրների միջոցով կատարուած պատճենումներից, որոնք յատուկ են խիստ յունական դպրոցի հեղինակների: Այսպէս՝ թարգմանիչը օգտագործում է «յայտնեմ» ἀποφαίνω-ի, «ձգումն» ἐπίτασις-ի, «կամք» διάθεσις-ի դիմաց, նա

չի խուսափում, սակայն, անուան կամ բայի արմատով բաղադրությամբ բառերից, այսպէս՝ πολύτροπος «բազմագունակ», φιλοδοξία «փառասիրութիւն», κενοδοξία «անփառութիւն», որոնց օրինակներ կան արդէն Աստուածաշնչի թարգմանութեան մէջ (օրինակ՝ «բազմագութ» (Յակ. Ե, 11) լուս. πολύσπλαγχνος, «բազմապատիկ» (Ղուկ. ԺԸ, 30) լուս. πολλαπλασίονα «սնայարծութիւն» (Փիլիպ. Բ, 3) լուս. κενοδοξία, եւ այլն): Սրանով էլ թարգմանչի լեզուն որակում է իբրեւ միջօղակ մի լեզու ոսկեղարեան եւ լուսարան հայերէնի միջեւ:

Թարգմանութեան լեզուի ձեւաբանական կազմի նախնական վիճակի մասին ստույգ կարծիք չենք կարող լայտնել, քանի որ յուշարձանը մեզ է հասել 11-րդ-19-րդ դարերի տարբեր, ոչ սակաւ դէպքերում նաեւ շփոթ գրչութեամբ: Նկատում են, օրինակ, բայական «-ել/եալ» վերջաւորութեան որակ կազմող շփոթութիւնները, որ մտածել են տալիս, թէ արդե՞օք գրիչները յստակօրէն գիտակցե՞լ են դրանց տարբերութիւնը:

Շարահիսակական համակարգը թերեւ թարգմանութեան առաւել հետաքրքիր լեզուական իրողութիւնն է, որ մասնագիտական յատուկ քննութեան կարիք է զգում: Այստեղ միայն ճշեմք, թէ ձգտելով թարգմանական ստուգութեան եւ ճշգրտութեան, թարգմանիչը միաժամանակ չի կտուցել բնագրին՝ իրեն վերապահելով որոշ ազատութիւն, հայերէնի շարահիսակական համակարգից բուսական տարբեր լուսական դարձուածքները, մասնատրապէս դերբայներով հարուստ երկարաշունչ տարբերութիւնները հայերէնի վերածելիս: Նման դէպքերում նա բազմազանութեան համար օգտագործում է բայական տարբեր ձեւեր, որ երբեմն յանգեցնում են նախիմաստի որոշ մթագնման կամ իմաստի աղճատման: Համանման փաստերը եւս հաստատում են վերն արուած մեր եզրակացութիւնը, որ թարգմանութիւնը ժամանակով նախորդում է լուսարան հայերէնին՝ գրաւելով նրա եւ դասական հայերէնի միջեւ միջին դիրք:

«Գիրք հարցողաց» երկի հայերէն ձեռագրերը
եւ նրանց գիտական դասակարգումը

«Գիրք հարցողաց» երկի հայերէն ձեռագրերը ունեն ժամանակագրական եւ աշխարհագրական լայն ընդգրկում: Ստեղծուելով շուրջ 900 տարուայ՝ 10-19-րդ դարերի ընթացքում, պատմական Հայաստանի տարբեր գաւառներում եւ այլուր (Պոլիս, Օդոնթ, Մուշ, Լիւմ, Սեբաստիա, Հոնմ եւ այլն), նրանք ներկայացնում են գիտական համակողմանի հետաքրքրութիւն: Աղբիւրագիտական մանրագին եւ երկարատեւ հետախուզումների շնորհիւ մեզ յաջողուեց պարզել յուշարձանի՝ այսօր աշխարհի տարբեր գրապահոցներում եւ գրադարաններում պահուող ձեռագրերի ընդհանուր քանակութիւնը՝ թոով 20 ամբողջական ձեռագիր: Յայտնաբերուեցին նաեւ մի շարք պատահիկներ՝ մագաղաթեայ եւ թղթէ, բոլորն էլ հնագոյն գրչութեամբ 10-11-րդ դդ., որ վկայում են ժամանակին յուշարձանի մատնագրական հարուստ կեանքի մասին: Պատահիկները՝ աղճատ, պակասատր վիճակում անգամ փաստական անգնահատելի միջին են պարունակում երկի բնագրի, մասնատրապէս նրա բուն մասի՝ 362 հարցմունքներից շուրջ 184-ի մասին: Աւելին, նրանք ինքնին հաւաստում են «Գիրք Հարցողաց»-ի եւս մէկ տասնեակ ձեռագրերի երբեմնի գոյութիւնը: Հնարատր է դառնում առաջին անգամ տալ այդ ձեռագրերի լիակատար ցանկը, նրանց գիտական համակողմանի նկարագրութիւնը եւ ծագումնաբանական աղիւսակները, փաստական հարուստ, ըստ էութեան լիակատար հիմքով ներկայացնելու համաշխարհային հայրաբանական գրականութեան դասական մոտիւզներից մէկի կեանքը հայկական ձեռագրական աշխարհում:

«Գիրք հարցողաց»-ի հայերէն ձեռագրերն են


- 1 - A Մաշտոցի անուան Մատենադարան, թիւ 5595, 1279թ.
- 2 - B -,-,- թիւ 707, 13-րդ դ.
- 3 - C -,-,- թիւ 1500, 1283թ.

- 4 - D -,- թիւ 1924, 1653թ.
 - 5 - E -,- թիւ 829, 1657թ.
 - 6 - H -,- թիւ 2311, 1348թ.
 - 7 - HI -,- թիւ 4145, 1621-1655թթ.
 - 8 - Q -,- թիւ 436, 1790թ.
 - 9 - R -,- թիւ 1330, 1711թ.
 - 10 - S -,- թիւ 524, 18-րդ դ.
 - 11 - Bz Չմմտի վանքի մատենադարան, թիւ 139, 1829թ.
 - 12 - Bzl -,- թիւ 474, 1829թ.
 - 13 - G Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանք, թիւ 336, 1298թ.
 - 14 - K -,- թիւ 406, 1319թ.
 - 15 - L -,- թիւ 470, 1683թ.
 - 16 - T -,- թիւ 619, 1721թ.
 - 17 - Gal. 84 Ղալաթիայի Ազգ. Մատենադարան թիւ 84, 1675թ.
 - 18 - J Նոր Ջուղայի Ամենափրկիչ փրկիչ վանք, թիւ 390, 1173թ.
 - 19 - V2 Վենետիկ Մխիթարեան մատենադարան, թիւ 1209, 14-րդ դ. (°)
 - 20 - Cas. Հոռնի Կազանաթենսե գրադարան, թիւ 2053, 1625 թ.
- Ձեռագրական ցիւցի գերակշիռ մասին մենք ծանօթացել ենք տեղում Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարանում (10 ձեռագիր), Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի մատենադարանում (1 ձեռագիր), Հոռնի Կազանաթենսե գրադարանում (1 ձեռագիր), Վենետիկի Մխիթարեան մատենադարանում (1 ձեռագիր), մնացեալներին՝ մանրածապաւենների (4 ձեռագիր) և լրտասանկարների (շուրջ երկու տասնեակ պատտիկ) միջոցով:


Մեզ հասած քսան ձեռագրերից առաջին մեզ անմտոչելի երեքի մասին (առաջին երկուսը պահուել են Չմմտի վանքի գրադարանում No. 139 և No. 474 (Անտոնեան ֆոնդ) ձեռագրեր, երրորդը պատկանում է Պոլսի նախկին ազգային Ղալաթիոյ մատենադարանին) որոշակի պատկերացում ունենք ձեռագրացուցակներից:

Ձեռագրերի մեր կատարած քննութիւնը պարզեց, որ յուշարձանի հայերէն թարգմանութիւն մեզ է հասել մեկ՝ եզակի, իր ներսում առանձին ենթախմբերի բաժանուող խմբագրութեամբ: Յիշեալ ենթախմբերի ձեռագրագիտական և բնագրագիտական լանգամանակից քննութիւնը տրուած է մեր հրատարակութեան 1-ին հատորում (էջ XV-XLV): Ստորեւ ներկայացնում ենք վերջիններիս ծագումնաբանական ընդհանուր պատկերը և սխեմաները:

Ա. Մաշտոցի անուան Մատենադարանի No.5595 ձեռագիր (1279թ.) A, որ Երեւան է բերուել Վասպուրականից, 1915 թուականից յետոյ: Էլնելով ձեռագրական մի շարք տունեալներից՝ բնագրային ակնառու նմանութիւններ, նոյնական յիշատակարաններ, գրչական ընդհանրութիւններ և այլն, կարող ենք պնդել, որ սրանից է սերում Հոռնի Կազանաթենսե գրադարանի No. 2053 - Cas. ձեռագիրը, որն էլ իր հերթին ծնունդ է տուել Չմմտի վանքի No. 139 (Bz.) և No. 474 Անտոնեան ֆոնդի (Bzl) գրչագրերին: Թէպէտ վերջիններս մեր ձեռքի տակ չունենք, բայց ձեռագրացուցակների հաղորդած ձեռագրական տունեալներից էլնելով, կարող ենք հաւաստել այդ ծագումնաբանական կապը: Այսպիսով, սոյն ձեռագրախմբի ծագումնաբանական սխեման միանգամայն յստակ է, առանց անյայտ օղակների.




Բ. Այս ենթախմբի հնագույն նախօրինակը Մաշտոցի անուան Մատենադարանի No.2811-Ի ձեռագիրն է, որի ամբողջական ընդօրինակությունն է Մատենադարանի No. 4145-ԻI գրչագիրը: Այն պահպանել է գաղափարի ենթավերնագրերը, յիշատակարանները, էջակալման համակարգը, նոյնիսկ հարցմունքների հերթափայտության որոշ խախտումները: Ուշագրա է, որ ԻI-ի գրիչը բազմիցս նոյնությամբ պատճենել է նաև գաղափարի գրչի «յիշեա զՅովհաննէս» յիշատակագրությունը: Ի-ից ոչ անմիջականօրէն սերնած, սակայն նրան մերձաւոր ձեռագրերից են Մատենադարանի No.1924-D եւ No. 1330-R օրինակները: Այս խմբի նշումը բոլոր միատրներն էլ սերում են մի անձանօթ նախաքննագրից.




Զ. Այս ենթախմբին պատկանող երկու օրինակը՝ Մատենադարանի No.436-Q եւ Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքի No.619-T ձեռագրերը՝ հիմնականում նոյնական, պատրաստուել են Կ.Պոլսում: Առաջինի ընդօրինակողը՝ «Բոսքիոն նոտարը», Կ.Պոլսի յայտնի գրահրատարակիչ Մատթէոսի չորսն է, ուստի եւ կարելի է ենթադրել, որ ձեռագիրն ընդօրինակուած լինի տպագրութեան համար: Երկու ձեռագրերում էլ ուղղակի մատնաշնուններ կան այն մասին, որ ընդօրինակուել են Ղալաթիացի ազգ. մատենադարանի No. 84- Gal. 84 ձեռագրից: Վերջինիս ստացող Տէր Սուքիասը Պոլսին մերձակայ Բուրսա քաղաքի արքեպիսկոպոսն էր, որտեղից ձեռագիրը հեշտությամբ կարող էր տարուել Պոլիս եւ ընդօրինակուել: Այս ձեռագրերի հետ բազմաթիւ անշիտթելի նոյնություններ է դրսեւորում Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքի No.336-G ձեռագիրը գրուած աւելի վաղ՝ 1298 թուականին: Արդ, T եւ Q ձեռագրերի ուղղակի ընդօրինակումը Gal. 84 -ից եւ նրանց բազմաթիւ ակնառու

աղերսներ G-ի հետ, թոյլ են տալիս այս խումբը պատկերել հետևեալ կերպ.



Դ. Այս ենթախմբից մեզ յայտնի է երկու գրչագիր Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքի No.470-L եւ No.406-K, որոնց բնագրային իրաւաստկութիւնը՝ նոյնական որոշ յանդումների, թերիների, տարբերութեանների եւ սխալների առումով, վկայում է նրանց մերձաւոր ազգակցութիւնը: Ընդ որում, L-ը բերում է մի յիշատակարան՝ քաղուած 1395թ. կազմուած իր գաղափարից, որը կարող է դիտուել իբրեւ մի միջակա օղակ L-ի եւ K-ի միջեւ.



Ձեռագրերի ծագումնաբանական տյն կապերի բացայայտումը մեզ լիակատար հիմք տուեց քննական բնագրի պատրաստման ժամանակ զանց առնել Bz., Bz1, Cas., D, H1, Gal. 84, R, Q, S, T, V2 օրինակները՝ իբրեւ յետագայ ընդօրինակություններ մեր տրամադրութեան տակ եղող աւելի վաղ եւ արժէքաւոր A, G, H, K գրչագրերի: Սրանց պէտք է յանել նաև B, C, E, J ոչ պակաս արժէքաւոր ձեռագրերը, որոնցից C -ն Մխիթար Այրիւանեցու նշանաւոր ճառընտիրն է, իսկ J -ն՝ հնագույնը առհասարակ «Գիրք հարցողաց»-ի ձեռագրերի մէջ:

Գոյություն ունեն վերոյիշեալ ութ ձեռագրերի ազգակցական բարդ կապերի բազմաթիւ ցուցանիշներ, որոնցից շատ կարեւոր է հարցմունքների թոյն տատանումը 361-ից 362-ի միջեւ տարբեր

ձեռագրերում: Յուշարձանի բուն պատմությունը եւ լուսարէն բնագրի հետ թարգմանութեան հարաբերակցութեան ճշտորոշման առումով առաւել կարեւոր է 111, 158, 192 հարցմունքների ծաւալը, որը CGJ ձեռագրերում լրիւ համաձայնում է լուսարէն բնագրին, իսկ A E H K -ում փոքր ինչ մեծ է: Այս կետում բաւական հետաքրքիր է J հնագոյն ձեռագրի գրասած դիրքը, որը մերթ մօտենում է A խմբի, մերթ՝ CG խմբի ձեռագրերին: Քննուած երեւոյթը կարող է ունենալ երկու հնարատր բացատրութիւն. կամ հայերէնի լուսարէն նախօրինակը այս կետում եղել է անելի լիակատար, քան մեր մինչեւ օրս յայտնի լուսարէն միակ տեքստը, կամ այն հայկական հնագոյն յաւելում է: Իրերի ներկայ վիճակով առայժմ դժուար է ստոյգ որոշել այդ: Յետագայ ուսումնասիրութիւնները այս ուղղութեամբ եւ լուսարէն այլ բնագրերի յայտնաբերումը, թերեւս, յստակութիւն կմտցնեն խնդրում:

Բնագրերի պատրաստման եւ հրատարակութեան սկզբունքները

Ներկայ երկհատոր հրատարակութիւնը, ինչպէս արդէն ասել ենք, «Գիրք հարցողաց»-ի հայերէն թարգմանութեան առաջին, լիակատար, գիտա-քննական հրատարակութիւնն է, որ ներկայացնում է յուշարձանի հայերէն տարբերակի բնագիրը եւ նրա իտալերէն թարգմանութիւնը: Առաջին հատորը (371 էջ) յատկացում է «Գիրք հարցողաց»-ի հայերէն բնագրին՝ ուսումնասիրութեամբ, տողատակային այլընթերցումներով, ձեռագրերի գիտական նկարագրութեամբ, յատուկ անունների համադրական ցանկով (տես Basilio di Cesarea, *Il Libro delle Domande (Le Regole)*, edito da Gabriella Uluhogian, C.S.C.O. vol. 536 (Script. Arm. 19), Lovanii, 1993).

Երկի հայերէն թարգմանութեան գիտա-քննական բնագիրը պատրաստուած է հայերէն ութ ձեռագրերի համեմատութեամբ: Դրանք 13-17-րդ դարերում ստեղծուած, մեր հրատարակութեան մէջ A B C E G H J K պայմանական նիշերով ներկայացուած

գրչագրերն են, որոնցից A-ն վերցուած է իբրեւ հիմք ձեռագիր, իսկ մնացածները ներկայացուած են նրա համեմատութեամբ, մերթ իբրեւ նախընտրելի. մերթ՝ տողատակային այլընթերցումների տեսքով: Յուշարձանի հրատարակութեան մէջ օգտագործուել են նաեւ նրա մնացեալ գրչագրերի եւ պատմիկների տուեալները:

Երկրորդ հատոր (261 էջ) ներկայացնում է «Գիրք հարցողաց»-ի հայերէն տարբերակի իտալերէն թարգմանութիւն՝ ուսումնասիրութեամբ, ծանօթագրութիւններով՝ նախատեսուած մասնատրապէս օտարազգի հայագէտների, յուշարձանի լուսարէն բնագրի մասնագետների, հայրաքանական գրականութեամբ զբաղուողների, բիզանդագէտ բնագրագէտների համար, աստուածաշնչեան եւ յատուկ անունների առանձին ցանկերով, լուսարէն եւ հայերէն հարցմունքների համեմատական աղիսակով: Ելնելով սոյն հատորի նպատակներից, առաջարանը շօշափում է մասնատրապէս հայերէն թարգմանութեան իրայատկութեան խնդիրը եւ իտալերէն թարգմանութեան սկզբունքները (տես Basilio di Cesarea, *Il Libro delle Domande (Le Regole)*, tradotto da Gabriella Uluhogian, C.S.C.O., vol. 537 (Script. Arm. 20), Lovanii, 1993).

Ձեռագրերի քննութիւնը եւ լուսարէն նախաբնագրի հետ հայերէն թարգմանութեան համեմատութիւնը կատարուած է երոպական եւ հայկական բնագրագիտութեան մշակած ընդհանուր չափանիշների եւ սոյն հրատարակութեան ինքնալատուկ բնոյթով թելադրուած ուրոյն սկզբունքների կիրառումով:

Յուշարձանի բնագիրը վերարտադրելիս, բնականաբար մեր կողմից նկատի են առնուած գրչագրերի ներքին յատկանիշները՝ նրանցում առկայ բնագրի լիակատարութիւնը, անխաթարութիւնը, հարազատութիւնը նախաբնագրին, գրչութեան ժամանակը, որակը եւ այլն: Ինքնին հասկանալի է, որ տարընթերցումների ընտրութեան մեր գլխատր չափանիշը եղել է լուսարէնի հետ թարգմանութեան մերձատրութեան աստիճանը, քանի որ, ինչպէս ցոյց են տալիս փաստերը, «Գիրք հարցողաց»-ի թարգմանչի նպատակը տուեալ

դէպքում եղել է որքան հնարաւոր է բնագրից չհեռանալը: Օրինակ, հարցմունքերի § 147-ում μετὰ τῶν καταφοροντικῶς ἐχόντων թարգմանուել է « ընդ այնպիսին, որք արհամարհութեամբ ունին» (A H) եւ « ընդ այնպիսին, որք արհամարհութիւն ունին» (B C E G J K): Թէեւ երկրորդ ձեւը վկայուած է գրչագրերի մեծ մասում եւ անլի հարազատ է դասական հայերէնի քերականութեանը, մենք ընտրել ենք առաջինը, որտեղ « արհամարհութեամբ ունին» կապակցութիւնը բառացիօրէն նույնանում է 'էջա+ մակբայ կառուցուածքի հետ, որտեղ հայերէն մակբայը տրուած է գործիական հոլովով, ինչպէս ուրիշ բազմաթիւ տեղերում (տես՝ §§ 107, 582, 776 եւ այլն): Այլ խնդիր է, թէ սա կարող է խօսել թարգմանչի դրսեւորած ոչ բաւարար ճկունութեան մասին, բայց որ այն ուղղակի յունարէնի պատճենն է (որ ներկայ դէպքում էսկան է), փաստ է: Մեր ծանօթութիւնների մէջ առանձնապատու ուշադրութեան են արժանացել հայերէն բնագրում նկատուող բոլոր տեսակի շեղումները յունարէնից (բառիմաստային, քերականական, կառուցուածքային եւ այլն): Ընդ որում, դրանք « շեղումներ» կարող են համարուել սուկ պայմանականօրէն, քանի որ մի մասը վկայուած է յունարէն տեքստի տողատակերում, այսինքն, ի վերջոյ, դարձեալ բխում է յունարէն ձեռագրերից եւ ոչ թէ թարգմանչի կամայականութեան արդիւնք է: Սրա հետեւութեամբ, հայերէնի այն « շեղումները» եւս որ չեն վկայուած յունարէն տպագրում, պահանջել են խիստ զգուշատր մօտեցում, քանի որ կարող են եզրադրել յունարէն մի բնագիր, որը մեզ չի հասել, սակայն վկայում է հայերէն թարգմանութեան շրջանի յունարէն բնագրի վիճակը, մանաւանդ, եթէ նկատի ունենանք, որ, ինչպէս նկատեցինք, յունարէն ձեռագրերը ժամանակի առումով անլի ուշ շրջան են ներկայացնում, քան հայերէն թարգմանութիւնը: Այս իմաստով հրատարակութեան երկու հատորները իրականացնում են հարցերի մի ամբողջ համակարգ՝ առանձին խմբաւորումներով: Այս եղանակով ներկայացում է աղբիւրագիտական բանասիրական մի մեծ արժէք նիւթ, որ փաստօրէն գիտական լայն շրջանառութեան մէջ են դրում առաջին անգամ եւ որը հայագետների եւ

բիւզանդագետների թարգմանական հնագոյն յուշարձանների պատմութեան զբաղողների համար կարող է հիմք հանդիսանալ յետագայ համալիր քննութիւնների ժամանակ:

Ատենախօսութեան թեմայով հեղինակի հրատարակութիւնները

- 1) Contributi allo studio della traduzione armena dell' «Hexaameron» di Giorgio di Pisidia, in "Atti del Sodalizio Glottologico Milanese", XII (1959) [1962], n. 1-2, p. 19-27.
- 2) Contributi allo studio della tradizione manoscritta del Basilio armeno: I) il mscr. 5595 di Erivan, in "Rendiconti dell'Istituto Lombardo di Scienze e Lettere, classe di Lettere", Milano, n. 109 (1975), p. 210-225.
- 3) Tecnica della traduzione, particolarita' lessicali, calchi sintattici della versione armena dell'«Asceticon» di Basilio, in "Handes Amsorya", 89 (1975), n. 10-12, col. 405-422.
- 4) Note sul testo della traduzione armena dell'«Asceticon» di S. Basilio Magno, in "Rendiconti dell'Istituto Lombardo di Scienze e Lettere, classe di Lettere", Milano, n. 110 (1976), p. 114-122.
- 5) Repertorio dei manoscritti della versione armena di S. Basilio di Cesarea, in "Basil of Caesarea, Christian, Humanist, Ascetic" (ed. P. J. Fedwick), Pontifical Institut of Medieval Studies, Toronto, 1981, vol. 2, p. 571-588.
- 6) Un rotolo manoscritto inedito del Museo Storico di Sofia, in "Atti del Terzo Simposio Internazionale di Arte Armena-1981", Venezia-San Lazzaro, p. 606-615.
- 7) La tradizione manoscritta della versione armena dell'«Asceticon» di S. Basilio, in "Le Muséeon", n. 100 (1987), p. 363-376.
- 8) Problèmes d'onomastique dans la version arménienne des <Progymnasmata> de Théon, in "Handes Amsorya", 101 (1987), cc1 669-675.
- 9) Sur l'ononastique des oeuvres de traduction: la version arménienne des <Progymnasmata> de Théon. in "SILTA", Bologna, 15 (1986), n. 1-3, p. 97-106.

10) «Տեառն ասելով». լուսարեւի բացարձակ սեռականի թարգմանությունը Բարսեղ Կեսարացու հայերէն ընթացում, Պատմաբանասիրական հանդէս, 1989, 1 (124), էջ 167-176

11) In margine alla versione armena dello <Hexaameron> di Giorgio di Pisidia, in "Rivista di Bizantinistica", t. 1, fasc. 1, Bologna 1991, p. 91-109.

12) Նկատողություններ Գեորգ Պիսիդիսի «Վեցօրեայի» հայերէն թարգմանութեան մասին, Բանբեր Երեւանի համալսարանի, 1992, 1, էջ 167-173

13) La tradizione medievale armena sull'origine delle Regole di S. Basilio, in "Studi e Ricerche sull'Oriente Cristiano", 14 (1991), 3, p. 341-346.

14) Traduzioni armene di testi bizantini: problemi di edizione, in "Rivista di Bizantinistica", t. 2 (1992)

15) Բոլոնիայի հայերէն ձեռագիր թիւ 3291, Բանբեր Երեւանի համալսարանի, 1993, 2, էջ 105-114

16) La versione armena dei <Progymnasmata> di Teone: miniera per il recupero dei testi classici, in "Autori classici in lingue del Vicino e Medio Oriente" vol. II, Roma 1994, p. 127-132.

17) Ricerche filologico-linguistiche su antiche traduzioni armene di testi greci, in "Autori classici in lingue del Vicino e Medio Oriente", vol. II, Roma 1994, p. 278-285.

Գրախօսություններ.

1. G. Lafontaine-B. Coulie, La version arménienne des Discours de Gregoire de Nazianze, in "Bazmavep", 142 (1984), n. 3-4, col. 344-346.

2. Կիմ Մուրադեան, Գրիգոր Նազիանզացիի հայ մատենագրութեան մէջ, Բազմավէպ, 142 (1984), 3-4, սիւն. 347-350

Պրոֆ. Կարեն Գրիգորյան

Գտնվելը 8

Տպարանակ 180

Տպագրված է ՀՀ ԳԱ հասարակական գիտությունների
գիտական ինժեոմալիտի կենտրոնի տնտեսական
սեկտորում, Երևան-1, Արտ. լուս. 15.